

**ՍԿԶԲՈՒՆԸԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԿԱՅԱՑՄԱՆ ԴԻՄԵՐՈՆ ԵՎ  
ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ա. Ս. ԳՅՈՒՋՅԱՆ**

Կառավարման՝ որպես համընդհանուր տարածում ունեցող գործունեության, բարձրորակ իրականացման համար անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորված և բազմակողմ փորձարկում անցած սկզբունքների լայն կիրառություն: Դրան նպաստելու նպատակով ձևավորել և դասակարգել ենք կառավարման ծրագրային ապահովման (ԿԾԱ) հետազոտությունների բավականին ընդգրկուն ցանկ<sup>1</sup>: Մյուս կողմից, *սկզբունքային ապահովումը*<sup>2</sup> որպես կառավարման համակարգի կարևոր տարր, բազմաբնույթ և բազմակողմ քննարկման կարիք ունի: Ուստի այստեղ սկզբունքային ապահովման բնութագրման խնդրին կանդախտաբանք նաև մեկ այլ տեսանկյունից՝ *գիտելիքահենք տնտեսության* անցնելու պահանջներից: Ըստ վերջինի՝ մարդկային ամեն մի գործունեություն իրականացվելու է գիտակցված, այսինքն՝ այդ գործունեության վերաբերյալ ունենալ բավարար գիտելիք և տեղեկատվություն և, իհարկե, գիտենալ, թե ինչպես է իրականացվելու այն:

Եթե ԿԾԱ հետազոտությունը՝ որպես մարդկային գործունեության լայն տարածում ունեցող տեսակ, մի կողմից, գիտելիքահենք պետք է լինի, և, մյուս կողմից, ենթադրվում է, որ այն իրականացվելու է սկզբունքների կիրառությամբ, ապա առաջանում է ԿԾԱ հետազոտություններում օգտագործվող գիտելիքի և սկզբունքների իմաստային փոխհարաբերության խնդիրը: Եվ այսպես՝ արդյո՞ք գիտելիք է սկզբունքը, և բավարար է արդյոք սկզբունքների կիրառությունը տվյալ ԿԾԱ հետազոտությունը գիտելիքահենք համարելու համար:

Սկզբունքը, ունենա այն ընդհանրական բնույթ և կիրառելի լինի ցանկացած գործունեության համար, թե ձևակերպված լինի որոշակի ոլորտում օգտագործելու համար, ցուցում է, թե ինչպիսի ուղղությամբ և նպատակայնությամբ է իրականացվելու գործունեությունը: Դրանով այն տվյալ գործունեությունն իրականացնողի համար դառնում է օգտագործելի գիտելիք, որի գոյությունն արդեն իսկ ենթադրում է, որ այն ձևավորվել է որոշակի հիմքի վրա, ունի իմաստային հիմնավորվածություն և կիրառման օգտակարություն: Հասկանալի է, որ այս բնութագրերի առկայությունը ենթադրվում է նաև սկզբունքը ձևավորողի կողմից: Եթե հետագա քննարկման և գործնական կիրառման գործընթացներում դրանք հաստատվում են, ապա տվյալ սկզբունքը ճանաչում է գտնում և հետագա կիրառություն կարող է ունենալ: Եթե այդպիսի հավաստումը բացակայում է, ապա սկզբունքը չի ներառվում կիրառելի գիտելիքի պաշարում, միայն տեղեկատվություն է պահպանվում այն մասին, որ այն բավարար հիմնավորվածություն չունի, ուստի դրա հետագա կիրառությունն արդարացված չէ:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Ս. Գյուրջյան, Կառավարման ծրագրային ապահովման հետազոտության (ԿԾԱՀ) սկզբունքային ապահովման կազմն ու կառուցվածքը, հաղորդում 1, ԿԾԱՀ հիմնական սկզբունքները, «Լրաբեր», Հայաստանի ճարտարագիտական ակադեմիա, Եր., 2006, № 2, Ա. Ս. Գյուրջյան, Կառավարման ծրագրերի հետազոտության սկզբունքների դասակարգումը. «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», Էր., 2006, № 9:

Գիտական կամ գործնական հիմքի վրա ձևավորումը, փորձաքննության և փորձարկման փաստը, գործունեություն իրականացնելու նպատակով օգտագործումը արդեն իսկ ցույց են տալիս, որ տվյալ սկզբունքը գիտելիք է, գիտելիքի տեսակ կամ տարր է: Որոշակի իմաստով այն ընդհանրացված, նորմի տեսք ստացած և ինչ-որ չափով կիրառման պարտադրանք պարունակող մոտեցում է, սակայն ոչ մանրամասնեցված, այլ միայն որպես գործունեությունն ուղղորդելու խորհրդատվություն: Եվ որպես այդպիսին՝ սկզբունքների կիրառումը ԿԾԱ հետազոտություններում, համաձայն գիտելիքահենք գործունեության պարադիգմի պահանջների, լիովին արդարացված է, օգտակար և նշված հարացույցի (պարադիգմի) գործնական իրագործման բավականին տարածված օրինակ է: Այն մեծապես պայմանավորում է այդ հետազոտությունների ուղղվածությունը, ստացվող արդյունքների հիմնավորվածությունը և ընդունող լուծումների արդյունավետությունը:

Այդպիսի կիրառությունը, մյուս կողմից, պահանջում է այդ նպատակին ուղղված սկզբունքային ապահովման ձևավորում: Վերջինի համար, ինչպես նշել ենք<sup>2</sup>, պահանջվում է տվյալ ԿԾԱ հետազոտության էությանը համապատասխանող գիտագործնական բարձր հիմնավորվածություն ունեցող և բավարար փորձարկում անցած սկզբունքների գոյություն և դրանցից ընտրություն կատարելու ու կիրառելու հմտություններով օժտված մասնագետների մասնակցություն:

Այսպիսով, ակնհայտ է, որ սկզբունքը գիտելիք է: Սակայն, նկատի ունենալով, որ ԿԾԱ և դրա ձևավորման հետազոտությունները բազմաբնույթ և տարատեսակ կարող են լինել, որ դրանցից յուրաքանչյուրի բարձրորակ իրականացման համար կպահանջվեն իրենց նպատակների, սուբյեկտների, օբյեկտների, գործառույթների և այլ բազմազան բնութագրերի առանձնահատկություններին համապատասխան տարաբնույթ գիտելիքներ, կարելի է եզրակացնել, որ սկզբունքային ապահովումը դրանց միայն մեկ կողմը բնութագրող գիտելիք է, գիտելիքային հենքի միայն մեկ տարրն է: Հետևաբար, միայն սկզբունքային ապահովման ձևավորումն ու օգտագործումը դեռ բավարար չէ տվյալ ԿԾԱ հետազոտությունը գիտելիքահենք անվանելու համար: Սակայն, նկատի ունենալով սկզբունքների կիրառման կարևորությունը բարձրորակ լուծումներ ստանալու գործում, կարելի է նաև հավաստել, որ առանց սկզբունքային ապահովման մասնակցության տվյալ ԿԾԱ հետազոտությունը հազիվ թե հնարավոր է լիարժեք գիտելիքահենք անվանել:

Այս դատողությունները մի կողմից ցույց են տալիս սկզբունքային ապահովման կարևորությունը ԿԾԱ հետազոտությունների իրականացման գործում, ուստի ենթադրում են դրա գիտագործնական բավարար բարձր մակարդակով մշակվածության իրողությունը, ինչն էապես կօգնե խուսափելու կոնկրետ հետազոտության էությանը և ուղղվածությանը ոչ լիարժեք համապատասխանող սկզբունքների կիրառումից և դրա բացասական հետևանքներից: Մյուս կողմից, նկատի ունենալով ԿԾԱ հետազոտությունների բազմակողմանիությունը, ենթադրվում է նաև, որ այն պետք է դիտարկվի դրանց գիտելիքային հենքի այլ տարրերի հետ միասին՝ հաշվի առնելով դրանց միջև առկա փոխադարձ կապերը և փոխազդեցությունները:

Այս կողմերին առնչվող խնդիրների դաշտը բավականին լայն է, դրանց նորովի, ժամանակի և տնտեսության վերափոխումների արդյունավետ գործընթացի պահանջներին բավարարող լուծումների ձևավորումը անհրաժեշտ է դարձնում գիտագործնական ծավալուն հետազոտությունների իրականացումը և իրենց կարևորությանը համապատասխանող ուշադրությունը, այդ թվում, իհարկե, նաև

<sup>2</sup> Տե՛ս Ա. Մ. Գյուրջյան, Կառավարման ծրագրային ապահովման հետազոտության սկզբունքային և պարադիգմային ապահովման գաղափարը և ձևավորման մոտեցումները, «Հանրային կառավարում», Եր., 2006, № 2:

կառավարող մարմինների կողմից: Ցավոք, այս անհրաժեշտությունը, կարծում ենք, դեռ բավարար խորությամբ չի գիտակցված մեր հասարակությունում, երևի նաև զարգացած որոշ երկրներում: Ստորև դիտարկենք նշված երկու կողմերից առաջինի՝ սկզբունքային ապահովման գիտագործնական բարձր մշակվածության պահանջի, ինչպես նաև դրա բավարարմանն ուղղված միջոցառումների որոշ խընդիրներ: Ընդ որում, դրանցում նկատի է առնվում առաջարկվող մոտեցումների ոչ միայն զուտ տեսական հիմնավորվածությունը, այլև գործնական կիրառության փաստացի հնարավորությունները: Այս առումով է, որ խնդրի մշակվածությունը վերը բնութագրել ենք *գիտագործնական* տերմինով: Ստորև շարադրում ենք մեր հայեցակարգային պատկերացումներն այդ խնդիրների և առաջարկությունները դրանց լուծումներն ստանալու ուղղությունների վերաբերյալ: Դրանք համառոտակի հետևյալն են.

1. Մարդը՝ որպես բանական էակ, գոյատևման համար ոչ միայն հարմարվում է կենսամիջավայրի պայմաններին, օգտվում է բնության բարիքներից, այլև ձգտում է կենսամիջավայրը հարմարեցնել իր պահանջումներին, դրանց ինչ-որ մասը բավարարել իր ստեղծած բարիքների հաշվին: Նա այդ նպատակին է ծառայեցնում բնության կողմից իրեն տրված շնորհը՝ գիտակցված գործունեություն իրականացնելու կարողությունն ու հնարավորությունը: Եվ ինչքան լայն լինի վերջինների օգտագործման աստիճանը, այնքան ավելին կլինի նաև նշված նպատակի իրագործման մասշտաբը:

2. Կենսամիջավայրը և դրա հնարավորություններն իր գոյատևմանը ծառայեցնելուն ուղղված գործունեությունն արդյունավետ կարող է լինել, եթե դրա հիմքում դրվում են մարդու և կենսամիջավայրի մասին բավարար գիտելիքներ, ձևավորվում են հստակ նպատակադրումներ, իրականացվում է առկա ռեսուրսների նպատակային օգտագործում: Դա նշանակում է, որ մարդու գործունեությունը գիտակցված կարող է համարվել, եթե այն գիտելիքահենք, նպատակային և արդյունավետ է: Այս երեք պայմանները և դրանց ապահովումն ինչպես ողջ մարդկության, այնպես և առանձին հատվածների համար բարդ համակարգեր են: Դրանց ճանաչումն ու անհրաժեշտության գիտակցումը, իրագործման ուղղությունների և միջոցների ընտրությունը պահանջում են գիտական լուրջ հետազոտությունների իրականացում, ստացված արդյունքների համակարգում, ներդրման կազմակերպում և այլ գործողություններ:

3. Մարդկության գոյատևման բնութագրերի դինամիկայի միջինացված օրինաչափությունների գնահատումը և պատմական ընթացքի վերլուծությունը ակնհայտորեն ցույց են տալիս մարդկային հասարակության շարունակական զարգացման փաստը: Այդ օրինաչափությունը՝ որպես մարդկության զարգացման օբյեկտիվ տնտեսական օրենքի գործողություն, ամենայն հավանականությամբ շարունակվելու է նաև հետագա պատմական ժամանակաշրջաններում: Դրա սոցիալ-տնտեսական հիմքը մարդկային գիտակցված գործունեության հետագա զարգացումն ու ընդլայնումն է, որը պայմանավորված է լինելու նրա՝ իր գիտելիքային հենքի հետագա զարգացումով, նոր գիտելիքների ձևավորումով և լայն կիրառությամբ:

4. Մարդկային գործունեության զարգացման կարևոր գործոն և միաժամանակ հետևանք է աշխատանքի բաժանումը: Այն պայմանավորել է գործունեության մասնագիտացումը և ոլորտների առանձնացումը, ինչպես նաև տարածքային միավորներում տեղական պայմաններով թելադրված նպատակահարմար մասնագիտացման ուղղությունները: Աշխատանքի բաժանումը և գործունեության մասնագիտացումը, մյուս կողմից, պայմանավորել են նաև գործունեության յուրաքանչյուր ոլորտում աշխատողի կողմից իրականացվող գործառույթների պահանջներին համապատասխանող մասնագիտական գիտելիքների և հմտությունների անհրաժեշտություն: Դա իր հերթին պահանջում է համապատասխան մասնագիտությամբ

կադրերի պատրաստում և վերապատրաստում, որը դառնում է մարդկային գործունեության և հասարակության զարգացման կարևոր ոլորտ ու գործոն:

5. Մարդկային գործունեության բարձր արդյունավետություն ապահովելու կարևոր պայման և միջոց է գործընթացների բարձրորակ կառավարումը: Այն կոչված է որոշակիացնելու տվյալ գործունեության և դրա առանձին բաղադրիչների իրականացման բոլոր մանրամասները, ուստի անհրաժեշտ է ամեն մի գործունեության (գործողության) համար տնտեսության հիերարխիայի ցանկացած մակարդակում: Հետևաբար, կառավարումը, լինելով գործունեության ընդհանրական և համընդհանուր ոլորտ, միաժամանակ մասնագիտացված պետք է լինի գործունեության առանձին ոլորտների ուղղությամբ: Դրանցում զբաղված կառավարչական կադրերը մասնագիտացված պետք է լինեն տվյալ ոլորտի կառավարման գործառույթների կատարման մեջ, ստանան այդ ոլորտների պահանջներին և առանձնահատկություններին համապատասխանող մասնագիտական գիտելիքներ և հմտություններ:

6. Կառավարման գործընթացի և գործառույթների իրագործման մեխանիզմը, հիմնականում, տվյալ մակարդակում կառավարման քաղաքականության մշակումը և կառավարչական որոշումների ընդունումը և դրանց իրականացման միջոցառումների հիմնավորումն է, ինչպես նաև իրագործման գործընթացների հսկողությունը: Այդ նպատակով ձևավորվում են առկա հիմնախնդիրների լուծման նպատակային ծրագրեր (այլ կերպ՝ զարգացման ծրագրային ապահովում), իրականացվում են ԿԾԱ հետազոտություններ, կատարվում է դրանց փորձաքննություն, որոնք հիմք են հանդիսանում ընդունված քաղաքականության և ծրագրերի իրագործման համար, ուստի և դառնում են կառավարման գործընթացի կարևոր բաղադրիչներ:

7. Կառավարման քաղաքականության ծրագրային ապահովում ձևավորելու և դրան ուղղված նպատակային հետազոտությունների հիմքում, որպես կանոն, դրվում են նպատակադրված արդյունքների ստացմանը նպաստող, գիտագործնական փորձարկում անցած որոշակի սկզբունքներ: Դրանք՝ որպես տվյալ ժամանակում ճանաչում ստացած գիտելիք, դառնում են ծրագրային ապահովման (ԾԱ) ձևավորման գիտելիքային հենքի կարևոր բաղադրիչ: Դրանց կիրառությունն օժանդակում է ծրագրի գիտագործնական հիմնավորվածության և արդյունավետության մակարդակների բարձրացմանը: Այսպիսով, ԿԾԱ *հետազոտությունների սկզբունքայնացման* (այսինքն՝ սկզբունքների օգտագործման կամ *սկզբունքային ապահովման*) աստիճանը դառնում է տվյալ հետազոտության գնահատման կարևոր բնութագիր:

8. Կառավարման որևէ ծրագրի սկզբունքային ապահովում ձևավորելու համար անհրաժեշտ են այդ ծրագրի պահանջներին և առանձնահատկություններին համապատասխանող որակ, ուղղվածություն և հավաստիություն (գիտագործնական հիմնավորվածություն) ունեցող սկզբունքներ: Դրանց ընտրության համար հիմք կարող է դառնալ ԿԾԱ հետազոտությունների նախօրոք ձևավորված սկզբունքների ամբողջությունը, ինչպես նաև պահանջվող սկզբունքային ապահովում ձևավորելու, ապա և օգտագործելու հմտություններ ունեցող կադրերի առկայությունը: Բավարար հիմնավորվածությամբ սկզբունքների մշակումը հետազոտության ընթացքում ժամանակային սահմանափակվածության պատճառով, որպես կանոն, նպատակահարմար չէ: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հրատապ լուծում պահանջող հիմնախնդրի համար անհրաժեշտություն է առաջանում մշակել իրենց ուղղվածությամբ և էությամբ տվյալ ժամանակում նորություն հանդիսացող կամ նոր մտեցումներ պահանջող ծրագրեր:

Սակայն այսպիսի դեպքերում ենթադրելի է նաև, որ եթե ծրագրի մշակման ընթացքում այդ սկզբունքներում բացահայտվում են որոշակի թերություններ, ա-

պա դրանք հնարավորինս վերացվելու են, եթե, իհարկե, զգացվում է դրա անհրաժեշտությունը:

9. Սկզբունքների առկա բազմության հիմքի վրա կոնկրետ ուղղվածության ծրագրերի սկզբունքային ապահովում ձևավորելու համար իրականացվելու են ստեղծագործական բնույթի աշխատանքներ: Հետևաբար, անհրաժեշտ են այնպիսի որակյալ մասնագետներ, որոնք ի գործու լինեն կատարելու այդ աշխատանքները, քաջատեղյակ լինեն սկզբունքների առկա բազմությանը և մշակվող ծրագրի օբյեկտին, նպատակին և առանձնահատկություններին, ունենան սկզբունքները գնահատելու, դրանցից ճիշտ ընտրություն կատարելու, սկզբունքային ապահովումը ձևավորելու և օգտագործելու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Հասկանալի է, որ դա կպահանջի նաև այդ կադրերի բարձրորակ նպատակային մասնագիտացում:

10. Որպեսզի հնարավորինս խուսափենք սկզբունքային ապահովման ձևավորման համար նախատեսվող ստեղծագործական աշխատանքների կատարման ժամանակ սուբյեկտիվ մոտեցումներից և դրանցով պայմանավորված շեղումներից, նպատակահարմար է կանոնակարգել սկզբունքների բազմությունը՝ դասակարգելով այն ըստ տարբեր բնութագրերի, և այդ հիմքի վրա նախապես ձևավորել և ծրագրերի տարբեր տեսակների կիրառման համար առաջարկել համապատասխան սկզբունքային ապահովումներ: Դրանցում որոշակի ճշգրտումներ կատարելու հնարավորություններ, կարծում ենք, կարելի է ընձեռել հետազոտությունն իրականացնողներին այն դեպքերում, եթե ծրագրի փաստացի պայմանները ինչ-որ չափով տարբերվում են այդ սկզբունքային ապահովումներում նախատեսվածներից: Հասկանալի է, որ դա ևս կպահանջի համապատասխան մասնագիտական հմտություններ:

11. Կառավարման ծրագրերը կարող են խիստ բազմազան լինել ըստ իրենց ուղղվածության, նպատակադրումների, օբյեկտների, սուբյեկտների, տնտեսության ընդգրկման աստիճանի և բազմաթիվ այլ բնութագրերի: Դրանց տարբերությունները թելադրվում են փաստացի պայմաններով, առկա հիմնախնդիրների կազմով և կառուցվածքով, լուծման անհրաժեշտությամբ և հրատապությամբ, ցուցաբերվող մոտեցումներով, գիտելիքային հենքով և շատ այլ գործոններով: Ընդ որում, դրանք ժամանակի ընթացքում ևս զգալի փոփոխություններ կարող են կրել: Որպես դրա հետևանք՝ վերանայվում են նաև ծրագրերի հիմքում դրվող սկզբունքները: Նույնիսկ մնամատիպ ծրագրերի համար շատ հաճախ անհրաժեշտ է դառնում մշակման, սկզբունքային ապահովման վերանայումը: Ասվածից հետևում է, որ կախված փաստացի իրավիճակի, ծրագրերի նպատակադրումների և ուղղվածության, հետազոտության գիտելիքային հենքի և այլ փոփոխությունների չափից, նոր սկզբունքների ձևավորումը կամ առկա սկզբունքների համապատասխանությունը նոր պայմաններին ստուգելը շարունակական գործողություններ են, որոնք ուղեկցում են կառավարման գործընթացների կատարմանը, իրականացվում են տնտեսության համար կարևորություն ներկայացվող համարյա յուրաքանչյուր ծրագրի մշակման ժամանակ, ուստի սկզբունքային ապահովումը դիտվում է որպես գործունեության մասնագիտացված բնագավառ:

12. Սկզբունքը, հետևաբար նաև կոնկրետ ծրագրի սկզբունքային ապահովումը՝ որպես այդ ծրագրում կիրառելի սկզբունքների համախումբ, ձևավորվում է գիտելիքի հիմքի վրա, իր բովանդակությամբ գիտելիք է: Այն գիտելիքի զարգացում և միաժամանակ գիտության զարգացման արդյունք (հետևանք) է: ԿԾԱ հետազոտության գիտելիքահենք էությունը, այսպիսով, *անհրաժեշտ է դարձնում յուրաքանչյուր ծրագրային հետազոտության համար իր սկզբունքային ապահովման ձևավորումը:*

13. ԿԾԱ հետազոտության սկզբունքային ապահովման ձևավորման գործում մեծ է հետազոտությունն իրականացնող մասնագետների դերը: Ուստի, կախված նրանց մասնագիտական գիտելիքների ծավալից և մակարդակից, զգալի կարող է լինել այդ մասնագետների կողմից ցուցաբերվող սուբյեկտիվ մոտեցման ազդեցությունը ձևավորվող սկզբունքային ապահովման որակի, ընդգրկման և հիմնավորվածության աստիճանի վրա: Այս հանգամանքը էլ ավելի է կարևորում այդ գործընթացներում մասնակցողների մասնագիտացման, հետևաբար և նրանց պատրաստման և վերապատրաստման խնդիրը:

Ներկայացված հարցադրումների, մեկնաբանությունների, եզրահանգումների այս ցանկը հնարավոր է դեռ շարունակել կամ մամրամասնել: Սակայն, մեր պատկերացմամբ, այն լիովին բավարար և ընդգրկուն է ցանկացած գործունեության, առավել ևս ԿԾԱ հետազոտություններում սկզբունքային ապահովման մեծ կարևորությունը գիտակցելու և այն բարձր մակարդակով իրականացնելու նպատակով որակապես նոր մոտեցումներ մշակելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Կառավարման ծրագրային ապահովման ձևավորման և դրան ուղղված հետազոտությունների, վերջիններում սկզբունքների կիրառության, այդ նպատակի համար համապատասխան մասնագետ կադրերի անհրաժեշտության և առնչվող մի շարք այլ խնդիրների շուրջ բերված դատողությունները հանգում են հետևյալ եզրակացությանը.

*Շնայած սկզբունքները և սկզբունքային ապահովումը վերջին հաշվով նախատեսված են կոնկրետ խնդիրների հետազոտություններում կիրառելու համար՝ դրանք, այնուամենայնիվ, իրենց ընդհանրական էությանմբ (չմասնակիացված խնդրի համար) ինքնուրույն բովանդակություն ունեն: Դրանց ձևավորման հիմքերը կախված են ոչ թե խնդրի էությունից, չնայած դրա լուծման որոշակի ուղղություն են ցուցում, այլ այդպիսի ուղղության համար հիմք հանդիսացող օբյեկտիվորեն առկա պայմանների կամ/և տեսական մոտեցումների օգտագործումից:*

Դա նշանակում է, որ տարատեսակ ուղղվածության սկզբունքները, ընդ որում, ինչպես ընդհանրական, այնպես և կոնկրետ ոլորտային արտահայտվածությամբ (օրինակ՝ բնական ռեսուրսների օգտագործում, բնապահպանություն, բնակչության կենսամակարդակի բարձրացում, ժողովրդավարության զարգացում, մարդու իրավունքների պաշտպանություն, գործունեությունների կանոնակարգում և այլն) կարող են և հիմնականում ձևավորվում են հենց առանց այն խընդիրների գոյության և ուղղվածության մասին պատկերացումների, որոնց լուծման համար դրանք կիրառվելու են:

Նկատի ունենալով մարդկային գործունեության սկզբունքների կիրառության օգտակարությունն ու անհրաժեշտությունը՝ որպես դրա գիտելիքային հենքի կարևոր բաղադրիչ, դրանց ձևակերպման դժվարությունները և աննպատակահարմարությունը գործունեության ընթացքում (մասնավորապես ԿԾԱ հետազոտության գործընթացներում)՝ կարելի է վստահորեն հավաստել, որ սկզբունքները ձևավորվում, հիմնավորվում և փորձաքննվում են նախապես, այդ թվում նաև՝ նախքան դրանց գործնական կիրառության անհրաժեշտության առաջացումը:

Այդպիսի մոտեցումով ձևավորված սկզբունքների բազմությունից կոնկրետ դեպքերի համար ընտրվում են դրանց պայմաններին համարժեք սկզբունքները, և դրանց հիման վրա ձևավորվում են յուրաքանչյուր խնդրի լուծման սկզբունքային ապահովումները: Եթե սկզբունքի ձևավորման ժամանակ ընդունված հիմնական պայմանները զգալիորեն են տարբերվում կիրառման դեպքի պայմաններից, ապա սկզբունքում կարող են կատարվել որոշակի փոփոխություններ՝ անպայմանորեն հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և օգտակարությունը:

Սկզբունքների և դրանց կիրառության վերը նշված իմաստային, ժամանակային, գործառության, օբյեկտային և սուբյեկտային տարբերությունները ապացուցում են սկզբունքների ձևավորման գործընթացների ինքնուրույնությունը, հետևաբար և առանձնացված իրականացման ինչպես հնարավորությունը, այնպես և նպատակահարմարությունը: Դա նշանակում է, որ սկզբունքների ձևավորումը, ինչպես նշեցինք վերը, մարդկային գործունեության առանձին ոլորտ է: Եվ քանի որ ձևավորված և փորձարկված սկզբունքը գիտելիք է, իսկ գիտելիքաստեղծ գործունեությունն իր էությամբ գիտական է, ապա իրավացի է ենթադրել նաև *սկզբունքաստեղծ գիտական գործունեության գոյությունը*:

Կարծում ենք, արդարացված է գիտությունների համակարգում առանձնացնել *սկզբունքագիտության ճյուղն իր ուղղյուն գործառությանը և որոշակի տեղով այդ համակարգում*:

Գիտագործնական տեղեկատվության մեզ ծանոթ աղբյուրներում այդպիսի ճյուղի գոյության կամ առանձնացման նպատակահարմարության մասին փաստացի տվյալների, ինչպես նաև նման տերմին-հասկացության չենք հանդիպել: Ուստի սկզբունքագիտության առանձնացման մասին այստեղ արված առաջարկությունը, որը ելնում է մարդկային գործունեության գիտելիքային հենքի ընդլայնման պահանջից և դրա բավարարման հնարավորությունների օգտագործման նպատակահարմարությունից, կարծում ենք, համապատասխան ուշադրության կարժանանա գիտական հասարակայնության կողմից: Չէ՞ որ, վերջին հաշվով, գիտության նոր ճյուղերի ձևավորումն ու առանձնացումը նոր երևույթ չէ՞: Այն ուղեկցել է մարդկությանն իր ստեղծագործական մտածողության զարգացման ողջ ընթացքում: Մարդուն և իր կենսամիջավայրին առնչվող խնդիրների շուրջ նոր գիտելիքները, որպես կանոն, առաջանում են գիտության՝ տվյալ ժամանակում ձևավորված կառուցվածքում: Սակայն այդ գիտելիքների նորությունը, մարդկության գոյատևման և զարգացման համար կարևորությունը, ինչպես նաև ուղղության ինքնուրույնությունը և հետագա զարգացմանն ավելի մեծ ուշադրություն դարձնելու օգտակարությունը ձևավորում են գիտության առանձին ճյուղ:

*Գիտության նոր ճյուղի ձևավորումը*, ինչքանով էլ այն այլ ճյուղի կազմում որոշակի զարգացում անցած լինի, բարդ խնդիր է: Իրականացումը, բացի այդպիսի առաջարկության բազմակողմ հիմնավորումից, ինչը փորձեցինք ներկայացնել վերը, ենթադրում է նաև շատ հարցերի պարզաբանում՝ խնդիրների լուծում, ռեսուրսների ներդրում, կադրային ապահովում:

**А. С. ГЮРДЖЯН - Основы и целесообразность формирования и становления принципов.** - В статье на основе ранее опубликованных автором работ предпринята попытка обосновать выделение в отдельную отрасль науки принципов - системы научно обоснованных и апробированных принципов, носящих довольно универсальный характер и применяемых в любом виде человеческой деятельности и, в частности, в процессах управления. Вводится понятие принципового обеспечения программного управления, дается обоснование, доказывающее целесообразность подобного подхода.

<sup>3</sup> Տե՛ս Կ. Կուն, *Структура научных революций*, пер. с англ., М., 1977, **Б. Рассел**, *Человеческое познание. Его сфера и границы*, М., 1957, **Б. М. Кедров** и другие, *Взаимодействие наук*, М., 1984: